ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

«03» 09 2013թ.

N 117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Ղահրամանյան*

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի կողմից օգոստոս ամսվա ընթացքում ընդունած որոշումը և արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 4 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ 8628-13
Մուտք թիվ 03.09.2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

# ՈՐՈՇՈՒՄ

«05» օգոստոսի 2013 թվականի N 17

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻՑ 420,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով Այգեկ համայնքի հողի սեփականատեր Արթուր Մաքևոսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Արթուր Մաքևոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-009-164-002 ծածկագրի 0,34հա գյուղատնտեսական նշանակության վարելահողից 420,0 քառակուսի մետր հողամասի վրա՝ նախագծին համապատասխան կառուցապատում իրականացնելիս հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված, այն արտացոլել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2013 թվականի օգոստոսի 5
գ. Այգեկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երնանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02» օգոստոսի 2013 թվականի N 7

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2013 թվականի օգոստոսի 2-ի N 02/07.1/2768-13 գրությունը՝ *կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1) Գայանե Սարգսյանին գործուղել Արմավիրի մարզպետարան՝ մասնակցելու 2013 թվականի օգոստոսի 5-ից մինչև օգոստոսի 15-ը անցկացվելիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գյուղապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներին:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին (Սուսաննա Թորոսյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2013 թվականի օգոստոսի 2
գ. Այգեկ

# ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» օգոստոսի 2013 թվականի N 8

## ԿԱՐԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով Կարինե Աբրահամյանի դիմումը՝ *կարգադրում եմ.*

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղապետարանի ենթակայության մշակույթի տան աշխատակից՝ ակումբավար Կարինե Աբրահամյանին 2013 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև 2013 թվականի սեպտեմբերի 30-ը տրամադրել իր հերթական արձակուրդը, ընդամենը՝ 24 աշխատանքային օր:
5. Կարինե Աբրահամյանին համարել աշխատանքի մեջ 2013 թվականի հոկտեմբերի 1-ից:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2013 թվականի օգոստոսի 27
գ. Այգեկ

«28» օգոստոսի 2013 թվականի N 9

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով, 167-րդ հոդվածի 3-րդ մասով, 169-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով 2013 թվականի օգոստոսի 27-ի համաձայնագիրը՝ *կարգադրում եմ.*

1. Աշխատանքի անհրաժեշտությունից ելնելով՝ 2013 թվականի սեպտեմբերի 2-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավար Վարուժան Աբրահամյանին հետ կանչել ամենամյա արձակուրդից:
2. Ամենամյա արձակուրդի չօգտագործված 10 (տասը) աշխատանքային օրը տեղափոխել այլ ժամանակ:
3. Համայնքի ղեկավարի տեղակալ Մայիս Աբրահամյանին 2013 թվականի սեպտեմբերի 2-ից ազատել համայնքի ղեկավարի լիազորությունների կատարումից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2013 թվականի օգոստոսի 28
գ. Այգեկ